Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ազատազրկված անձանց շրջանում 2024 թվականին կատարված ինքնասպանությունների և ինքնավնասումների վերաբերյալ

Իրավական նախաձեռնությունների կենտրոնն ուսումնասիրել է ազատազրկված անձանց շրջանում 2024 թվականին կատարված ինքնասպանությունների և ինքնավնասումների միտումները: Կազմակերպության հարցմանն ի պատասխան՝ Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ 2024 թվականին քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության դեպք չի արձանագրվել: Ինչ վերաբերում է ինքնասպանության փորձերին, հաշվետու ժամանակահատվածում արձանագրված միտումներն 2023 թվականի համեմատությամբ նվազել են: 2024 թվականին 14 անձի կողմից կատարվել է ինքնասպանության 19 փորձ, այն դեպքում, երբ 2023 թվականին 22 անձի կողմից կատարվել է ինքնասպանության 29 փորձ: Դրական ենք գնահատում ինքնասպանության փորձերի նվազման միտումը և ինքնասպանությունների բացակայությունը, սակայն նույնը չենք կարող ասել ինքնավնասումների վերաբերյալ, որի դեպքում նկատվում է աճի միտում: Այն դեպքում, երբ 2023 թվականին արձանագրվել է ինքնավնասման 472 դեպք՝ կատարված 155 անձի կողմից, 2024 թվականին արձանագրվել է 205 անձի կողմից կատարված ինքնավնասման 626 դեպք, որում ներառված է նաև 101 դեպք, երբ ազատազրկված անձի կողմից կատարվել է ինքնավնասում կատարելու բանավոր հայտարարություն, օրինակ, թուք կամ այլ նյութ ներարկելու, որևէ առարկա կուլ տալու վերաբերյալ: Ինքնավնասումների վիճակագրությունն ըստ քրեակատարողական հիմնարկների ունի հետևյալ թվային բաշխվածությունը.

- «Աբովյան» ՔԿՀ-ում 9 անձի կողմից կատարվել է 17 ինքնավնասում, որից 4-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Արթիկ» ՔԿՀ-ում 23 անձի կողմից կատարվել է 58 ինքնավնասում, որից 12-ը՝ ինքնավնասման վերաբերյալ հայտարարություն:
- «Արմավիր» ՔԿՀ-ում 73 անձի կողմից կատարվել է 220 ինքնավնասում, որից 34-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Գորիս» ՔԿՀ-ում 5 անձի կողմից կատարվել է 20 ինքնավնասում, որից 3-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում 17 անձի կողմից կատարվել է 54 ինքնավնասում, որից 7-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 53 անձի կողմից կատարվել է 215 ինքնավնասում, որից 26-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Սևան» ՔԿՀ-ում 4 անձի կողմից կատարվել է 6 ինքնավնասում, որից 2-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Վանաձոր» ՔԿՀ-ում 20 անձի կողմից կատարվել է 35 ինքնավնասում, որից 13-ը՝ ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություն:
- «Վարդաշեն» ՔԿՀ-ում 1 անձի կողմից կատարվել է 1 ինքնավնասում: Ինքնավնասում կատարելու վերաբերյալ հայտարարություններ չեն եղել:

Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ հաշվի առնելով 1 անձի կողմից քրեակատարողական տարբեր հիմնարկներում ինքնավնասում կատարելու հավանականությունը՝ միևնույն անձի վերաբերյալ տվյալները հաշվարկվել են քրեակատարողական այն հիմնարկի տվյալներում, որտեղ տվյալ անձն առաջին անգամ կատարել է ինքնավնասում: Օրինակ, եթե տվյալ անձն ինքնավնասումն առաջին անգամ կատարել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, իսկ հետագայում՝ նաև «Գորիս» ՔԿՀ-ում, ապա ինքնավնասումների՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի տվյալներում դա հաշվարկվել է ինչպես դեպքերի, այնպես էլ անձանց քանակում, իսկ «Գորիս» ՔԿՀ-ի՝ ինքնավնասումների

տվյալներում դա հաշվարկվել է միայն որպես ինքնավնասման դեպք՝ առանց ինքնավնասում կատարած անձանց քանակի ավելացման:

Դրական ենք գնահատում այն, որ ներկայումս վարվող հաշվառումը հնարավորինս արժանահավատ և օբյեկտիվ ձևով է արտացոլում ինքնավնասում կատարած անձանց թիվը և ինքնավնասումների դեպքերը, սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է առանձնացված հաշվառում կատարել ըստ կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչը հնարավորություն կտա տարբերակել ինքնավնասումների միտումները՝ կախված անձանց քրեադատավարական կարգավիճակից և քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակ դրա փոփոխությունից:

Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ արձանագրված ինքնավնասումները կատարվել են հիմնականում սափրիչի սայրով, կրակայրիչի երկաթյա մասով և նմանատիպ այլ առարկաներով մարմնի տարբեր հատվածներում վնասվածքներ առաջացնելու, առավել քիչ հաճախականությամբ՝ մարմնի տարբեր հատվածներում սուր, ծակող առարկաներ մտցնելու, թուք ներակելու, աչքերի կոպերը, շուրթերը կարելու, վերջույթի տարբեր հատվածները գամելու, մետաղյա առարկաներ կուլ տալու միջոցով: Քրեակատարողական ծառայությունից փոխանցել են նաև ազատազրկված անձանց կողմից ինքնավնասում կատարելու բարձրաձայնված պատճառների վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ տեղեկացնելով, որ բարձրաձայնված պատճառների գումարը չի համապասխանում արձանագրված ինքնավնասումների կամ ինքնախեղումների դեպքերի քանակին, քանի որ որոշ դեպքերում անձի կողմից նույն ինքնավնասման կամ ինքնախեղման վերաբերյալ նշվել են մեկից ավելի պատճառներ:

- 200 դեպքում պատճառը եղել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, քաղաքացիական բժշկական կենտրոն տեղափոխվելու ցանկությունը, առողջական, դեղորայքի և բուժանձնակազմի հետ կապված խնդիրները և պահանջները:
- 126 դեպքում պատճառը եղել է նյարդային լարվածությունը, հոգեկան անկայուն, անհավասարակշռի հոգեվիճակում լինելը:
- 92 դեպքում պատճառը եղել է քրեակատարողական հիմնարկների կամ քրեակատարողական ծառայության հետ կապված խնդիրները՝ վարչակազմ, շենքային պայմաններ, կայացված որոշումներ, անվտանգային գոտու փոփոխություն, խուզարկություն, արգելված իրերի հայտնաբերում, քրեակատարողական այլ հիմնարկ տեղափոխվելու/չտեղափոխվելու պահանջ:
- 88 դեպքում պատճաը եղել է վարույթն իրականացնող մարմնի, դատարանների կամ դատախազության կողմից կայացված որոշումներին անհամաձայնությունը, որի մեջ մտնում են առաջադրված մեղադրանքը, խափանման միջոցը, դատավճիռը, պայմանական վաղաժամկետ ազտման մերժումը, դատական նիստերի հետաձգումը, նիստերին չմասնակցելու ցանկությունը և նիստերին չտեղափոխվելը:
- 64 դեպքում ինքնավնասում կամ ինքնախեղում կատարած անձինք պատճառներ չեն նշել կամ հայտնել են, որ այդ մասին կտեղեկացնեն պաշտոնատար անձանց:
- 35 դեպքում պատճառը կապված է եղել անձնական և ընտանեկան խնդիրների հետ:
- 13 դեպքում պատճառը եղել է տարբեր պահանջները, այդ թվում՝ անօրինական, և օրինական պահանջներին չենթարկվելը, օրինակ, արտահերթ լրացուցիչ հեռախոսազանգ պահանջելը, կերակրադռնակը բաց թողնելը, խցից ազատ դուրս գալը, քրեակատարողական հիմնարկի միջոցների հաշվին հեռուստացույց պահանջելը, այլ խուց փոխանցել սնունդ կամ ծխախոտ փոխանցելու արգելքը և այլն:
- 7 դեպքում պատճառը եղել է արտահանձնման դետ կապված խնդիրները:
- 3 դեպքում պատճառը եղել է տարբեր պաշտոնատար անձանց կողմից իրենց հետ ընդունելություն կատարելու ցանկությունը:
- 2 դեպքում պատճառը եղել է կյանքին վնաս հասցնելու ցանկությունը:
- 1 դեպքում անձը հայտարարել է, որ «սատանան է դրդել»:

Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ քրեակատարողական հիմնարկներում տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների և մասնագետների կողմից իրականացվում են ինքնասպանության և ինքնավնասման դեպքերի կանխարգելման աշխատանքներ: Մասնավորապես, ինքնավնասումների դեպքում քրեակատարողական հիմնարկի հոգեբանի կողմից կատարված հոգեբանական աշխատանքի արդյունքում կազմվում է հոգեբանական եզրակացություն՝ ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ: Ինքնասպանության, ինքնասպանության փորձի և ինքնավնասման յուրաքանչյուր դեպքով կազմված փաստաթղթերն ուղարկվում են համապատասխան քննչական ստորաբաժանում, ինքնասպանության փորձի և ինքնավնասման դեպքերում կատարվում են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, ինչպես նաև ինքնասպանության փորձի և ինքնավնասման ռիսկի կառավարման պլանով նախատեսված բազմամասնագիտական խմբի կողմից անհրաժեշտ աշխատանքներ:

Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում 2022 թվականից գործարկվող ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի զննության և գնահատման գործիքակազմի կիրառման և դրա արդյունքում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ 2024 թվականի հունվարի 30-ից մարտի 12-ն ընկած ժամանակահատվածում «Վերապատրաստում ինքնասպանությունների կանխարգելման միջամտությունների պլանների վերաբերյալ՝ հիմնված Հայաստանի քրեակատարողական հիմնարկների համար մշակված ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի զննության և գնահատման գործիքակազմի վրա» թեմայով դասընթացներ են իրականացվել, որոնց մասնակցել է քրեակատարողական ծառայության և հիմնարկների շուրջ 170 աշխատակից: Հաշվի առնելով վերապատրաստումների ընթացքում ստացված գիտելիքներն ամրապնդելու, ինչպես նաև մշտապես դրանց հասանելիություն ունենալու անհրաժեշտությունը՝ Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից տպագրվել և Քրեակատարողական ծառայությանն են տրամադրվել ինքնասպանությունների կանխարգելման հատուկ միջամտությունների ուղեցույցներ, որոնք ըստ համապատասխան վերաբերելիության տրամադրվել են հիմնարկներին:

2023 թվականին արձանագրված ինքնասպանության և ինքնավնասումների դեպքերի վերաբերյալ տվյալների ամփոփման արդյունքները տրամադրվել են քրեակատարողական հիմնարկներին: Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալի կողմից հանձնարարվել է, որպեսզի կատարվի հաճախակի ինքնավնասում, ինքնասպանության փորձ կատարած դատապարտյալների և կալանավորված անձանց մոտ ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի կառավարման պլանի և նրանց հետ տարվող աշխատանքների արդյունավետության գնահատում, վերանայվեն ռիսկի կառավարման և նվազեցմանն ուղղված աշխատանքների պլանները, կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ, ռիսկի կառավարման և նվազեցմանն ուղղված աշխատանքները կառուցվեն՝ ելնելով ռիսկի և դրա արդյունքում դրսևորվող վարքի հիմքում ընկած պատճառների ուսումնասիրությունից, ինչպես նաև այդ աշխատանքները դարձվեն նպատակային և թիրախավորված՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև բժշկական ստորաբաժանումների համապատասխան մասնագետներին, այդ թվում՝ նաև հոգեկան առողջության ոլորտի մասնագետներին: Հանձնարարվել է նաև, որպեսզի հաճախակի ինքնավնասում, ինքնասպանության փորձ կատարած դատապարտյալների հետ իրականացվող վերասոցիալականցման պլանում ներառվի և հատուկ ուշադրություն դարձվի ռիսկի նվազեցման կարիքը:

Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալի կողմից քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին և քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է ազատազրկված անձանց ռիսկի

կառավարման և ինքնասպանությունների, ինքնասպանության փորձի և ինքնավնասման դեպքերի նվազեցմանն ուղղված աշխատանքներում առաջնորդվել Արդարադատության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 631-Լ հրամանի պահանջներով[1] և դրանից բխող բազմամասնագիտական մոտեցման կարևորությամբ, ապահովել պատշաճ, նպատակային, թիրախավորված, անհատականացված և հստակ հաջորդական քայլեր ներառող պլանի կազմում և իրականացում, ինչպես նաև կատարված աշխատանքների վերաբերյալ հստակ, ոչ ընդհանրական, բովանդակային գրառումների կատարել, ապահովել ինքնավնասում կամ ինքնասպանություն կատարելու համար հնարավոր միջոց հանդիսացող առարկաների հայտնաբերման նպատակով խուզարկությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների պատշաճ իրականացումը և դրանց նկատմամբ պատշաճ և հետևողական հսկողությունը:

2024 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից ինքնավնասումներ կատարելու դեպքերի կապակցությամբ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ներքին անվտանգության ապահովման բաժնում իրականացվել է 1 ծառայողական քննություն և 2 ուսումնասիրություն, որոնց արդյունքում քրեակատարողական ծառայողների գործողություններում կարգապահական խախտումներ չեն հայտնաբերվել: Ինքնասպանությունների վերաբերյալ ծառայողական քննություններ չեն անցկացվել: Ինքնավնասումների և ինքնասպանություններ կատարելու դեպքերի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների կողմից ծառայողական քննություններ չեն անցկացվել: Անդրադառնալով 2024 թվականի ընթացքում ինքնավնասման դեպքերով քրեական վարույթ նախաձեռնելու, ծառայողական քննություններ կամ ուսումնասիրություններ կատարելու, քրեակատարողական ծառայողների գործողությունների և դեպքերի միջև պատճառահետևանքային կապերի, մեղավորության բացահայտման վերաբերյալ հարցադրումներին՝ տեղեկացրել են, որ նմանատիպ ուրաքանչյուր դեպքով կազմված փաստաթղթերն ուղարկվում են համապատասխան քննչական ստորաբաժանում, հետևաբար հարցի վերաբերյալ հետագա ընթացքը դուրս է քրեակատարողական ծառայության և հիմնարկների լիազորությունից:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել՝ բացառելու համար ինքնավնասում կատարելու գործիք հանդիսացող առարկաների առկայությունն ազատազրկված անձանց մոտ: Եթե ուշադրություն դարձնենք ինքնավնասում կատարելու պատճառներին, կարող ենք տեսնել, որ ազատազրկված անձինք ինքնավնասում կատարելու միջոցով փորձել են բարձրացնել իրենց առողջությանն առնչվող դժգոհությունները՝ կապված «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կամ քաղաքացիական բժշկական կենտրոն տեղափոխվելու, դեղորայքի և բուժանձնակազմի հասանելիության հետ կապված խնդիրների հետ: Ինքնավնասում կատարելը կապված է եղել նաև ազատազրկված անձանց նյարդային լարվածության, հոգեկան անկայուն կամ անհավասարակշիռ լինելու հետ: Հետևաբար ինքնավնասման յուրաքանչյուր դեպք պետք է ազդակ լինի բժշկական օգնության և սպասարկման համար պատասխանատու գերատեսչություններին և կառույցներին՝ արձանագրելու և բարելավելու համար առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության հետ կապված խնդիրները: Բացի այդ, ինքնավնասումների կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել հոգեբանական և հոգեբուժական ծառայությունների որակը և համախմբել մասնագիտական տարբեր խմբերի, այդ թվում՝ սոցիալական աշխատողների, հոգեբանների և բժշկական անձնակազմի ջանքերը:

[1]«Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի գնության և գնահատման կարգը հաստատելու և Արդարադատության նախարարի 2022 թվականի հուլիսի 26-ի թիվ 405-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արդարադատության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 631-Լ հրաման:

Ինքնավնասում կատարելու պատճառները կապված են եղել նաև քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների, անվտանգային գոտու փոփոխության, քրեակատարողական հիմնարկների փոփոխության և այլ որոշումների, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի, դատարանների կամ դատախազության կողմից կայացված որոշումներին անհամաձայնության հետ: Նշվածի համատեքստում դժգոհությունները վերաբերել են առաջադրված մեղադրանքին, խափանման միջոցին, դատավճռին, պայմանական վաղաժամկետ ազատման մերժմանը, դատական նիստերի հետաձգմանը և այլն: Այս հարցում մեր մոտեցումն այն է, որ ինքնավնասման դեպքերը պետք է նաև ազդակ լինեն՝ ուղղած քրեական արդարադատության իրականացնող կառույցներին՝ հնարավորության դեպքում վերանայելու և բարելավելու իրենց մոտեցումները և իրենց կողմից կայացված որոշումները: